

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X



Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their
gratitude to “JTI ARMENIA” CJSC
for sponsoring the publication of this volume

Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

BULLETIN OF MATENADARAN
36

Yerevan – 2023

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА
36

Ереван – 2023

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԲԱՆԲԵՐ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

36

*Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ*

*Խմբագրական խորհուրդ՝ Գոհար Մուրադյան (գլխավոր խմբագիր), Վահան Տեր-
Ղևոնդյան, Կարեն Մաթևոսյան, Օլգա Վարդազարյան, Վահե Թորոսյան, Թեո վան
Լինտ, Արմեն Մովսեֆյան, Արտաշես Շահնազարյան, Գուրգեն Գասպարյան,
Արուսյակ Թամրազյան, Հայկ Համբարձումյան:*

*«Բանբեր Մատենադարանի» 36, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի
ին-տ. Երևան, 2023, 304 էջ:*

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ ԵՎ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԳԱՊԵՏ

Բանալի բառեր՝ ներսես Շնորհալի (Ներսես Գ Կլայեցի), Կոմիտաս Վարդապետ, եկեղեցական երաժշտություն, երաժշտական-բանաստեղծական արվեստ, շարական, հոգևոր ժառանգություն:

Հայ Առաքելական եկեղեցու տոնելի սուրբ, բանաստեղծ, հայկական միջնադարի մեծագույն մտածող և երաժիշտ Ներսես Շնորհալու (1102-1173) երաժշտահասարակական նորարարական գործունեությունն ու երաժշտաբանաստեղծական ժառանգությունը հայկական և համաքրիստոնեական մշակույթի մեծագույն նվաճումներից են: Հայոց երաժշտական-հոգևոր մշակույթի մեջ Շնորհալին ամենամեծ շարականագիրն է, նաև ուսուցիչ և, ըստ միջնադարյան աղբյուրների, անզուգական երգիչ, որ բարենորոգել և ճոխացրել է եկեղեցական պաշտոնեակությունը հարյուրավոր օրհներգերով, որոնք հարստացրել են Հայ եկեղեցու Պատարագն ու ժամերգությունը: 1873 թ. Վենետիկում Հայր Գևորգ Ալիշանը հրատարակում է «Շնորհալի եւ պարագայ իւր» աշխատությունը, որի համապատասխան բաժիններում հանգամանորեն ներկայացնում է նրա գործունեությունը, իսկ ուսումնասիրության 7-րդ գլխում քննության ենթարկում Շնորհալի-երգեցողի հանճարը: Հայ երաժշտագիտության մեջ Ներսես Շնորհալու անձն ու գործը լուսաբանված է Նիկողոս Թահմիզյանի «Ներսես Շնորհալի. երաժիշտ և երգահան» մենագրության մեջ¹, իսկ Շնորհալի-Կոմիտաս առնչությունները համառոտ դիտարկված են նույն հեղինակի «Կոմիտասը և հայ ժողովրդի երաժշտական ժառանգությունը» գրքի՝ հայ հոգևոր երաժշտությանը նվիրված հատվածում²: «Շնորհալին հայ ժողովրդի ազնիվ սիրտն է, պայծառ միտքն ու մաքուր խիղճը: Շնորհալին աղոթքն է հայ եկեղեցու: Շնորհալին հայ եկեղեցու

* Կոմիտասի անվան կոնսերվատորիա, Երաժշտության պատմության ամբիոնի վարիչ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ, lusine_sahakyan72@mail.ru, հոդվածը ներկայացնելու օրը՝ 15 հոկտեմբերի 2023, հոդվածը գրախոսելու օրը՝ 29 դեպտեմբերի, 2023:

¹ Ն. Թահմիզյան, *Ներսես Շնորհալի երգահան և երաժիշտ*, Երևան, 1973:

² Նիկողոս Կ. Թահմիզեան, *Կոմիտասը եւ Հայ ժողովուրդի երաժշտական ժառանգութիւնը*, Փասադենա, 1994, էջ 140-153:

կամարների տակ և հոգիների մեջ միշտ հավերժ հնչող Անլուելի Զանգակատունն է հայ հոգևոր երգի ու շարականի»։ Այսպես են գրել էջմիածնի միաբանները Պահլավունիների իշխանաց տոհմից սերված Ներսես Շնորհալու մասին³։

Այս կոչումը ներշնչված է Պարույր Սևակի համանուն պոեմից (1959 թ.), որ վերջինիս մոտ վերաբերում է Կոմիտաս Վարդապետին, որը բազում թելերով կկապվի Հայոց եկեղեցու երևելի հայրերին։ Դարեր հետո գրող և բանասեր Արշակ Չոպանյանը հենց Կոմիտաս Վարդապետին պիտի անվանի «20-րդ դարու Շնորհալի»⁴։

Ինչո՞ւ է այս կոչումը տրվում հենց Կոմիտաս Վարդապետին։ Ներսես Շնորհալու առաքելությունն ու հոգևոր-մշակութային ժառանգությունը Կոմիտաս Վարդապետի համար, անտարակույս, կովան ու հենարան էին, նաև իր ապրած բարդ ու խառնիճաղանջ ժամանակներում։ Կոմիտասը Շնորհալուն անդրադարձել է իր ողջ կյանքի ընթացքում, մի քանի ուղղություններ, բայց, ցավոք, ոչ նրա ժառանգության հնարավոր ընդգրկմամբ։ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի աշակերտ Սողոմոն Սողոմոնյանի (1895 թվականից Կոմիտաս Վարդապետի) համար հայոց եկեղեցական երաժշտությունը դառնում է հայտնություն, նա խորամուխ է լինում հայ հոգևոր մոնոդիայի կամ, իր իսկ բնորոշմամբ՝ «Սրբազան երաժշտության» ոճական և ձևակազմական առանձնահատկությունների մեջ, իսկ միջնադարյան լուսերգության երկու հսկան՝ Գրիգոր Նարեկացին և Ներսես Շնորհալին, Կոմիտաս Վարդապետի ստեղծագործական և երաժշտագիտական ժառանգության մեջ արժանանում են առանձնահատուկ ուշադրության։ Կոմիտասի առաջին անդրադարձը Շնորհալուն, նրան առնչվող պատմական կենսագրական փաստերի ամփոփումն է։ 1893 թ. մայիսի 28-ին Գ դասարանի աշակերտ Կոմիտասը (այդ շրջանում Սողոմոն Սողոմոնյանը) Գևորգյան ճեմարանի ուսումնական խորհրդի դատին է հանձնում իր «Շնորհալին. նորա դարը եւ նորա ժամանակ յուզուած կրօնական խնդիրները» վերնագրով ավարտաճանր, որն արժանանում է մրցանակագրի⁵։

Այս ավարտաճառի հիմքն ու սկզբնաղբյուրն են Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրական»-ն ու Վեոնդ Ալիշանի աշխատությունը։ Սուրբ Ներսես Շնորհալու անձն ու գործը, ընդունակություններն ու արժանիքները Վարդապետը ներկայացնում է պատմաքաղաքական և մշակութային վայրիվերումների համա-

³ «Ս. Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակը» (խմբագրական), էջմիածին, 1973, դեկտեմբեր, էջ 7։

⁴ Ա. Չոպանյան, «Կոմիտաս Վարդապետը», Անահիտ, 1901, № 6-7, էջ 42։

⁵ Կոմիտաս Վարդապետ, Ուսումնասիրություններ եւ յօդուածներ, գիրք Ա, Սարգիս Խաչենց, Երևան, 2005, էջ 15-55։

տեքստում, հունական, ասորական և հայոց եկեղեցիների տարաձայնությունների ու բախումների խաչմերուկներում: Աչքի է զարնում Կոմիտասի՝ պատմական փաստերին անդրադառնալու տրամաբանական և կանոնակարգված շարադրանքը, ժամանակաշրջանի կարևոր անցուղարձերի մեջ խորանալու կարողությունը: Ինչպե՞ս, ի՞նչ պայմաններում է Հայրապետական Աթոռը տեղափոխվում Կիլիկիա, ինչպես է հույների, Ասորիքի ու պապերի հայացքի ներքո ձևավորվում Հայոց իշխանությունը, չե՞ որ նրանք ձգտում էին ձուլել հայոց եկեղեցին ու դավանանքը: Խռովություններ էին թե՛ ներսից, թե՛ դրսից: Շնորհալու վարած դիվանագիտական աշխատանքի շնորհիվ հույն ու լատին եկեղեցիները ճանաչում են հայ առաքելական եկեղեցին՝ իր ինքնուրույն ավանդույթներով ու վարդապետությամբ: Այս իրողությունների մեջ առավել վեհորեն է հառնում Ներսես Շնորհալու՝ բացառիկ դիվանագետի ու հայրենասերի կերպարը, որը, Կոմիտաս Վարդապետի բնորոշմամբ՝ «Հայրենի եկեղեցու անկախությունն ու սրբությունը ուղղափառ դավանության ամուր հիմքերի վրայ դնելու» առաքելությունն իրականացրեց: Կոմիտասն իր ավարտաճառում անդրադառնալով Շնորհալու կենսագրական փաստերին պարզաբանում և բացատրում է նաև Շնորհալու Կլայեցի մականվան ծագումը (Հոռմկլայի բերդում երկար մնալու համար, կալ է կամ կալայ, որ բերդ է նշանակում): Կոմիտաս Վարդապետն առանձնահատուկ կարևորում է «Թուղթ ընդհանրական»-ը, որը Շնորհալու արձակի պսակն է, նորընտիր կաթողիկոսի անդրանիկ կոնդակն՝ ուղղված հայ ժողովրդին, առանձնացնում է Շնորհալու կարողությունների ու գիտելիքների ընդգրկումները: Վարդապետն իրեն բնորոշ ինքնատիպ ոճով գրում է, որ Ս. Գրքի ոտանավորների, եկեղեցական երաժշտության, ժամանակի անհրաժեշտ գիտությունների կողքին Շնորհալին ընտիր հայկաբանություն է յուրացրել: Գիտելիքներ, որոնք ինքն էլ էր յուրացրել էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում և, մեր կարծիքով, եթե Կիլիկիայի Քեսունի Կարմիր վանքի ամենանշանավոր սանը Ներսես Շնորհալին է եղել, ապա Գևորգյան հոգևոր ճեմարանի ամենահայտնի սանն էլ Կոմիտաս Վարդապետն էր:

Կոմիտաս Վարդապետն իր աշխատության մեջ դիտարկում է Շնորհալու գրվածքների տաղաչափության երկու հիմնական ձև. «հին հայկական և արաբական նոր տաղաչափություն»⁶: Իր ավարտաճառի շարունակության մեջ Վարդապետը տարանջատում և դասդասում է Շնորհալու արձակ և ոտանավոր գրվածքները, մեկնություններն ու ներբողները, նշելով, որ. «Հին հայկական տաղաչափությամբ են գրուած գրեթէ նորա բոլոր շարականները, իսկ արաբականով երգերն ու «Յիսուս Որդին»(1151)»⁷:

⁶ Կոմիտաս Վարդապետ, Ուսումնասիրություններ եւ յօդուածներ, գիրք Ա, էջ 52:

⁷ Նույն տեղում, էջ 54:

Արևելյան մշակույթի որոշ տարրերով ներշնչված լինելու տեսակետը հետագայում զարգանում է հայ երաժշտական միջնադարագիտության մեջ՝ մասնավորապես Նիկողոս Թահմիզյանի ուսումնասիրություններում. նա գտնում էր, որ «... Շնորհալին լայնօրեն կիրառել է մեղեդիական «Նոսրովային» կոչուած բուն արեւելեան գունավորութիւն ունեցող տիպարներ... Շնորհալի-բանաստեղծը հաւասարապէս ազատ կիրառել է թէ՛ գեղարուեստական արձակ խոսքը, թէ՛ անհաւասար տողերով ոտանաւորը, եւ թէ՛ խստօրէն շափուած քերթուածի այլազան տեսակներ»⁸:

Շնորհալուն նվիրված Կոմիտասի աշխատության վերջին պարբերությունը Վարդապետի գրության կարևոր մասն է, որի յուրաքանչյուր ձևակերպում կարող ենք վերագրել նաև իրեն. «Ներսես Շնորհալին, որ «Նրգիչ» մականունով էլ է հայտնի, ունի հնարած, ամենայն հավանականությամբ, գեղեցիկ եղանակներ, որոնց վերա գանձեր, տաղեր էր գրում և երգում: Իսկ այն արվեստը, որ «մանր ուսմունք» անունով է հայտնի, լավ գիտեր Ներսես Շնորհալին և որը պահանջում էր քահանաներից անթերի կերպով իմանալ և գործածել, ասելով՝ «Զմանրուսմունս ձայնաւորացն պաշտել յեկեղեցիս»»⁹:

Կոմիտասի այս ավարտաճառն ասես մեկնակետ է դառնում՝ Շնորհալուն խորապես ճանաչելու և նրա երաժշտական ժառանգության մեջ մասնագիտորեն խորամուխ լինելու ճանապարհին: Իր գիտակցական և ստեղծագործական ողջ կյանքի ընթացքում Վարդապետը մեկ անգամ է արտահայտում Շնորհալուն վերաբերող հպանցիկ ու չհիմնավորված կարծիք: 1905 թ. Թիֆլիսի Հովնանյան օրիորդաց դպրոցում Կոմիտաս Վարդապետը դասախոսություն է կարդում հայ ժողովրդական և եկեղեցական երաժշտության մասին: Թիֆլիսի «Մշակում» հրատարակվում է դասախոսության սղագրությունը, որի վերջաբանում գրված է. «Կ. Պոլսի տիրացուները ամիրաներին դուր գալու և նրանց զվարճացնելու համար սկսել են յեկեղեցական յեղանակները շարգիների, թյուրքիների և մանիների ազդեցության տակ կըլկըլացնել, զարդարել. այսպիսով շարականների, մանավանդ տոնականների վրա պատվաստվել և ոտար վոճը և պղտորել նրանց հարազատությունը: Այդ թյուրիմացություն հիմք են ծառայել նաև այն յեկեղեցական յերգերը, վորոնք պատկանում են Կիլիկյան շրջանին և ուր նկատվում է

⁸ Նիկողոս Կ. Թահմիզեան, Կոմիտասը եւ Հայ ժողովուրդի երաժշտական ժառանգութիւնը, էջ 137: Այս թեմային է անդրադարձել նաև երաժշտագետ Առն Հակոբյանը, աե՛ս «Ներսես Շնորհալին և հոգևոր օրհներգության արվեստը», ՊՔՀ, 1989, № 3, էջ 133-144:

⁹ Կոմիտաս Վարդապետ, Ուսումնասիրութիւններ եւ յօդուածներ, գիրք Ա, էջ 54: Այս ավարտաճառով Կոմիտասն ավարտում է Գևորգյան հոգևոր եկեմարանի լրիվ դասընթացը:

խորապես արաբ յերաժշտության ազդեցությունը, որինակ, Շնորհալու և Լամբրոնացու հոգևոր յերգերից վոմանք»¹⁰:

Մեր խորին համոզմամբ, Կոմիտասի ասածը թերի է ընկալվել սղագրողների կողմից, քանզի իր և՛ նախորդ¹¹, և՛ հետագա հրապարակումներում Վարդապետն այս միտքը չի զարգացրել: Բայց այն, որ Շնորհալին՝ որպես համապարփակ երևույթի, քաջատեղյակ էր իր ժամանակի արվեստի հոսանքներին, չէր կարող քննադատվել Կոմիտասի նման առաջադեմ արվեստագետի կողմից: Շնորհալուն նվիրված Վարդապետի հոգվածները մեծաքանակ չեն:

Ներսես Շնորհալին Կոմիտաս Վարդապետի Ժառանգության մեջ

Իր ավարտաճառից մեկ տարի հետո, 1894 թ., Վաղարշապատի «Արարատ» ամսագրի 7-րդ համարում Վարդապետը հրապարակում է «Հայոց եկեղեցական եղանակներ» հոդվածի այն հատվածն, ուր անդրադարձ է արվում շարականներին ու մանրուսման եղանակներին: Կոմիտաս Վարդապետը հայ եկեղեցական երաժշտությանը նվիրված առաջին իսկ հոդվածից կարևորում է Ներսես Շնորհալու մտքերն ու դատողությունները, ինչպես նաև շնորհալիական երաժշտաբանաստեղծական արվեստի ձայնակարգային և տաղաչափական առանձնահատկությունները: Մեջբերելով Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրական»-ից՝ Կոմիտասը գրում է. «Ձեկեղեցական գիրս ուղիղ ընթեռնուկ և զմանր ուսումս ձայնաւորացն պաշտէ յեկեղեցիս, և ապա գալ ի ձեռնադրութիւն քահանայության»¹²: Կոմիտասը շարականների տաղաչափական-վանկաչափական առանձնահատկությունները դիտարկելիս մատնանշում է Շնորհալու «Հոգեգալստյան» կանոնը¹³, իսկ եկեղեցական երաժշտությանը, երգեցողությանը վերաբերող իր որոշ տեսակետներ հիմնավորում է Շնորհալուն վկայակոչելով, «Յիշեսցուք» երգի օրինակով¹⁴:

Մանրուսման եղանակները բնորոշելիս Կոմիտասը բարձր է գնահատում նաև Կրիլիկյան դարոցի ավանդույթները, և իհարկե Ներսես Շնորհալու ներդրումը: «Հին երաժիշտները «Մանրուսումն» ասելով հասկանում էին ուսումն եկեղեցական երգերի, եղանակների և խազերի մասին»¹⁵: Կրիլիկյան Հայաստանի

¹⁰ Կոմիտաս, Հոգվածներ յեվ ուսումնասիրություններ, Յերեվան, 1941, էջ 13-14: Անշուշտ, խոսքն այստեղ բանավոր ավանդույթով մեզ հասած երգերի մասին է:

¹¹ Տե՛ս մեր հաջորդ շարադրանքը:

¹² Կոմիտաս, Հոգվածներ յեվ ուսումնասիրություններ, 1941, էջ 112:

¹³ Նույն տեղում, էջ 110:

¹⁴ Նույն տեղում, էջ 112:

¹⁵ Ֆրիկ, Դիւան, աշխատասիրութեամբ Տիրայր Արքեպիսկոպոսի, Նիւ-Եորք, 1952, էջ 223:

նշանավոր վանքերը՝ Հոռմկլան, Սսի դպրոցը, Ակները, Արքակաղինը, Գրազարկը, Մլիճը, Սկևռան եղել են ոչ միայն Կիրիկյան, այլև առհասարակ, հայ երաժշտարվեստի մեծ կենտրոններ: Կիրիկյան Հայաստանի երաժշտությունը սկզբնավորվել է դեռևս Ժ-ԺԱ դարերից, այնտեղ գաղթած հայերի բանավոր ու գրավոր երաժշտական ավանդույթներից. մասնավորապես գուսանական երաժշտության նմուշներից, որոնցից են, օրինակ, Հեթում Ա-ի որդի Լևոն Գ թագավորի գերույթյան առթիվ հորինված «Աւա՛ղ զԼէոնն ասեմ» հայրենասիրական երգը, «Մարա թալանի» երգը:

Կիրիկյան բանաստեղծական մշակույթի մեջ ընդհանրություններ կարելի է տեսնել անգամ Պրովանսի, Ակվիտանիայի տրուբադուրների ասպետական-պոետական արվեստի հետ, որոնք եղել են խաչակիրների շնորհիվ տարածված մշակութային փոխառնչություններ¹⁶:

Մի առանձին երաժշտագիտական ուսումնասիրության նյութ է նաև Շնորհալու աշխարհիկ-երգային հանելուկների և կոմիտասյան Հարսանյաց երգերում տեղ գտած հանելուկների քննությունը¹⁷: Կոմիտասը բնորոշելով բազմատեսակ և խորհրդավոր հարսանեկան երգերը՝ ինքն է գրում, որ այդ երգերից «մի քանիսն էլ հանելուկներ են և զվարճական յերգեր»¹⁸: Շնորհալիական «Առակք»-հանելուկները վասն ուրախութեան մարդկան», նույնպես ստեղծված էին մարդկանց զվարճացնելու և սրամտություն զարգացնելու համար¹⁹:

Կոմիտաս Վարդապետի երաժշտատեսական ժառանգության կարևորագույն հատվածը վերաբերում է խազերի ուսումնասիրման և վերծանման հարցերին: Խազաբանական հին ձեռագրերը ուսումնասիրելու ընթացքում Կոմիտաս Վարդապետն առանձնահատուկ ուշադրությամբ է մոտեցել Շնորհալու երգերի մեջ կիրառվող խազերի նշանակությանը: 18-րդ դարի վերջից սկսած խազերի սիստեմը վերականգնելու և վերանորոգելու մի շարք փորձեր են եղել: Այդ աս-

¹⁶ Jean de Sir Joinville, *Histoire de Saint Louis*, Paris, 1874, p. 286-288.

¹⁷ Մատենագիրք Հայոց, հ. ԽԱ, ԺԲ դար, ներսես Շնորհալի, Գիրք Ա, Երևան, 2018, էջ 1224: Տե՛ս նաև, Ն. Թահմիզյան, *Ներսես Շնորհալի երգահան և երաժիշտ*, էջ 28-31, մասնավորապես՝ էջ 30, Գանձակեցու մեջբերումը, ըստ որի Շնորհալին հորինել է իր հանելուկները, որպեսզի սրամտ ասվեն խնջույքների ու հարսանիքների ժամանակ՝ փոխառեն «առասպելաց» (Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն հայոց*, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 147): Ըստ Ն. Թահմիզյանի՝ Շնորհալին «հետևելով ժողովրդական և ժողովրդային-մասնագիտացված արվեստին, իր հանելուկների գեթ մի մասը հորինել է որպես աշխարհիկ երգեր» (էջ 31), հանելուկները, ըստ վերջինիս, դուրս չեն մնացել ժողովրդական և ժողովրդական-մասնագիտացված (գուսանա-աշուղական) ոլորտից: Աշուղները մինչև նոր ժամանակներ պահպանել են հանելուկներով հարցեր առաջադրելու ավանդույթը՝ մասնավորապես մրցահանդեսներին (էջ 28-29):

¹⁸ Կոմիտաս, *Հորվածներ յեվ ուսումնասիրություններ*, էջ 12:

¹⁹ Մ. Աբեղյան, *Երկեր*, հ. Գ, Երևան, 1970, էջ 120:

պարեզում հայտնի էր Կեսարիայի ս. Դանիելի վանքում հայտնաբերված՝ Գրիգոր Գապասաքալյանի՝ խազագիտությանը նվիրված ձեռագիր դասագիրքը, որը Կոմիտաս Վարդապետին ժամանակին հետաքրքրել է²⁰: Կոմիտասը, Կեսարիայի ձեռագրից «Հանդես Ամսօրեայ»-ում բերված Ներսես Շնորհալու «Նոր եղեմ» մեղեդու եղանակը վերծանելով, որոշ դատողություններ է արել խազերի ինտերվալային նշանակության մասին²¹:

Կոմիտասը նաև գրառել և բազմաձայնել է շնորհալիական որոշ հոգևոր երգեր: Ներսես Շնորհալու ոչ մեծաքանակ (ըստ Թահմիզյանի՝ յոթ բազմազան հոգևոր երգ)²², բայց գեղարվեստական բացառիկ արժեք ունեցող, բանավոր ավանդույթով Կոմիտասին հասած շարականների ու սրբասացությունների կոմիտասյան ձայնագրությունները առանցքային տեղ են գրավում Վարդապետի երաժշտական ժառանգության մեջ: Շնորհալու ստեղծագործությունն ընդգրկել է երգաստեղծության տարբեր ժանրեր, հոգևոր երգեր, տաղեր, շարականներ, որոնք ծաղկաքաղի պես տեղ են գտել կոմիտասյան հոգևոր ժառանգության մեջ: Ծննդյան «Ստեղծող մանկանց» տաղը միջնադարյան լուսերգության գագաթներից է²³, «Տեր ողորմեա» նախաբանով և վերջաբանով, որ Շնորհալու «Բան հավատոյ» քերթվածքի հատվածն է, այն Կոմիտասը ձայնագրել էր 1893 թ.:

Հայտնի են Կոմիտասի գրառած Արևազալի երգերից «Ճանապարհ ու ճշմարտությունը», ինչպես նաև ժամագրքից «Յիշեսցուք» և «Զարթիք» երգերը, վերջիններս Շնորհալին, ըստ ավանդույթի, հորինել է Հոռմկլայի բերդապահ զինվորների համար²⁴: «Յիշեսցուք ի գիշերի զանուն քո Տէր»-ը Կոմիտասի ենթաձայնային բազմաձայնության գեղեցիկ նմուշներից է, մինչև վեցձայն հասնող խմբերգային պոլիֆոնիայի կամ «մեղեդիակերտ բազմաձայնության»²⁵ հագեցած հնչողությամբ: 1906 թ. Փարիզի «Salle des agriculteurs» սրահում կայացած հայտնի համերգի ընթացքում հայ և ֆրանսիացի երգիչներից կազմված երգչախմբով Վարդապետը հնչեցրել նաև է շնորհալիական այս գլուխգործոցը²⁶:

²⁰ Ա. Արևշատյան, Գրիգոր Գապասաքալյանի երաժշտագիտական ժառանգությունը, Երևան, 2013, էջ 82-95:

²¹ Ռ. Աթայան, Կոմիտասի երաժշտագիտական գործունեությունը և խազաբանությունը, Երևան, 2021, էջ 64:

²² Ն. Թահմիզյան, նշվ. աշխ., էջ 147:

²³ Մատենագիրք Հայոց, հ. ԻԱ, ԺԲ դար, Ներսես Շնորհալի, Գիրք Ա, էջ 631, 648:

²⁴ Այս տեղեկությունը մեզ է հասել Կիրակոս Գանձակեցու միջոցով, տե՛ս, Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, էջ 120:

²⁵ Բնորոշումը Նիկողոս Թահմիզյանիմն է. այն ընդունելի է և հաճախ գործածվող, ֆանգի նշագրող բնորոշում է կոմիտասյան բազմաձայնության առանձնահատկությունները:

²⁶ «Հայկական նուագահանդես ի Փարիզ», Անահիտ, 1906, № 10-12, էջ 240:

Այս երգերի կոմիտասյան ձայնագրությունների գեղարվեստական և ճանաչողական արժանիքներին անդրադարձել է Նիկողոս Թահմիզյանը²⁷:

Կոմիտասը Շնորհալու ոչ մեծաքանակ մեղեդիները բազմաձայնել է պոլիֆոնիայի բազմազան հնարանքներով: Վարդապետի ժառանգության մեջ գտնում ենք դասական հոմոֆոն կերտվածքից մինչև 20-րդ դարին բնորոշ գծային-հորիզոնական կոմպոզիցիոն հնարներ: Կոմիտասի խմբերգային ոճի փայլուն նմուշներից են Շնորհալու շարականների («Շարական սրբոյն Գէորգայ զարավարին», «Նորահրաշ Պսակավոր», «Քրիստոս Ի Մէջ Մեր»)՝²⁸ բազմաձայնումը, որոնց ծիսական բնույթի մեջ ցայտունորեն դրսևորված է կապը ժողովրդական երգամտածողության հետ²⁹:

Հայ երաժշտագիտության մեջ Շնորհալու հոգևոր երգերի եղանակներում հանդիպող աշխարհիկ տարրերի հարցը ժամանակին բարձրացվել է³⁰, ևս մեկ անգամ հաստատելով կոմիտասյան այն տեսակետը, որ հայ գեղջուկ և հոգևոր երաժշտությունը «քույր և եղբոր» հարազատությունն ունեն³¹:

«Գէորգեայ զօրավարին» նվիրված շարականներից պահպանվել է մի քանի տարբերակ: Կանոնացված շարականի տարբերակները գետեղված են Շարակնոցում. «Քաջամարտիկ սուրբ Նահատակ» (Օրհնություն)³², «Ով սուրբ Գէորգ պարծանք ազգի» (Մանկունք)³³: Թաշչանական տարբերակից բացի, Կոմիտաս Վարդապետն, անտարակույս, ծանոթ է եղել նաև իր ուսուցիչ, շարականների էջմիածնական եղանակների իմացությունը և հայկական նոտագրության ձայնագրյալ համակարգին վարժ տիրապետող Սահակ սարկավազ Ամատունու շնորհալիական շարականների գրառումներին³⁴: Կոմիտասի եղանակավորած տարբերակը, մեր կարծիքով, նրա վաղ կոմպոզիտորական աշխատանքներից է: Եվրոպական դասական հարմոնիայի օրենքներով ներդաշնակված շարականում

²⁷ Նիկողոս Կ. Թահմիզեան, Կոմիտասը եւ Հայ ժողովուրդի երաժշտական ժառանգութիւնը, էջ 153:

²⁸ «Քրիստոս Ի Մէջ Մեր» շարականի մեղեդու որոշ դարձվածքներ կապվում են հայ նոր կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր Արամ Խաչատրյանի և նրա ստեղծած Օրհներգի հետ, սակայն այդ խնդրի քննությունը դուրս է մեր հոդվածի շրջանակներից:

²⁹ Շնորհալուն կամ նրան վերագրվող Շարականների մասին տե՛ս Մատենագիրք Հայոց, հ. ԻԱ, ժԲ դար, Ներսես Շնորհալի, Գիրք Ա, էջ 927: «Շարական սրբոյն Գէորգայ զարավարին» շարականը Մատենագրում գետեղված է պարականոն շարականների մեջ, էջ 1139:

³⁰ Ա. Պատմագրյան, ժողովրդական արվեստի տարրերի գործածությունը հայ եկեղեցական երգերի մեջ ժԲ դարում, Փարիզ, 1955:

³¹ Կոմիտաս Վարդապետ, Նամականի, Երևան, 2009, էջ 39:

³² Զայնագրեալ Շարական հոգևոր երգոց, Վաղարշապատ, 1875, էջ 912:

³³ Նույն տեղում, էջ 914:

³⁴ Սահակ վ. Ամատունի, «Շարականների ուսումնասիրութիւն», Արարատ, 1894, Գ, էջ 120-128:

խառը քառաձայն երգչախմբի ձայները բաշխված են հոմոֆոն-հարմոնիկ, ուղղահայաց հյուսվածքով: Փոյուզիական լադային հենքով մեղեդային գիծը շարադրվում է վերին ձայնում, վանկական հավասար շարժմամբ, խորալային հնչողովթյամբ: «Գէորգեայ զօրավարին» նվիրված շարականը ծավալվում է ԱԿ ձայնեղանակում: Այս ձայնեղանակում ծավալված մեղեդիները հայ կոմպոզիտորական արվեստում, ասես շարունակելով կոմիտասյան սկզբունքները, ներդաշնակվում են եռյակ վար մաժոր ձայնակարգում³⁵:

ՔԱՋԱՍԱՐՏԻԿ, ՍՈՒՐԲ ՆԱՀԱՏԱԿ

[Շարական սրբոյն Գեորգեայ զօրավարին]

Քա - ջա - մար - տիկ, սուրբ նա - հա - տակ, թագ - պար - ծա - նագ
Տիճը եւ մա թուր սուրբ հա - յե - լի պայ - ծա - ու - ցեալ

մար - տի - թո - սաց, զօ - ռեղ զի - նա - տր ան - մահ ար - թա - յիճ,
յերկ - նա - յիճ լու - սոյն, փայ-լեալ ի մարմ - ճի որ - պէս զան - մար - միճ,

Կոմիտասյան ձայնային յուրօրինակ հյուսվածքի օրինակ է նաև ժամագրքից «Աշխարհ ամենայն» խմբերգը: Պոլիֆոնիկ-գծային շարժման մեջ, հարմոնիկ լադի հիմքով կառուցված հիմնական մեղեդային գիծը բասային ձայների կրկնակի հնչունների ալտերացված շարժման ֆոնին, տրված է տենորներին: Իմիտացիոն սկզբունքով անցնում է սոպրանոներին, ընդգծելով «Տէր ողորմեա» բառերի հուզական-իմաստային երանգավորումը:

³⁵ Կոմիտասի նշված շարականից մինչև Աբամ Խաչատրյանի «Զանգով» 2-րդ սիմֆոնիայի «Ռուկան ախպեր» երգի սիմֆոնիզացիա:

12. ԱՇԽԱՐՀ ԱՄԵՆԱՅՆ

Տէ՛ր, ո - դոր - մեա, Տէ՛ր, ո - դոր - մեա, ո - դոր - մեա, Տէ՛ր, ո - դոր - մեա, Տէ՛ր,

Տէ՛ր, ո - դոր - մեա,

Բա - մամ ըզ - շոր - քունս, բար - քա - յիմ լեզ - ուսա, քո - դո - քնմ գանձ - մն՛

Տէ՛ր, ո - դոր - մեա, Տէ՛ր, ո - դոր - մեա, Տէ՛ր, ո - դոր - մեա:

Տէ՛ր, ո - դոր - մեա Տէ՛ր, ո - դոր - մեա, Տէ՛ր, ո - դոր - մեա:

Տէ՛ր, ո - դոր - մեա, Տէ՛ր, ո - դոր - մեա, Տէ՛ր, ո - դոր - մեա:

Տէ՛ր, ո - դոր - մեա, Տէ՛ր, ո - դոր - մեա, Տէ՛ր, ո - դոր - մեա:

Կոմիտասյան գրառումների առանձնահատկությունները

Կոմիտասի գրառումներն աչքի են ընկնում հայ հոգևոր երաժշտության ոճական և կառուցվածքային առանձնահատկությունների խորը իմացությամբ: Վարդապետի՝ շնորհալիական հոգևոր երգերի ձայնագրությունները զգալիորեն տարբերվում են իրենց եղանակավորմամբ, տաղաչափական և երաժշտա-լեզվական արժանիքներով, շնորհալիական ոճի ճշգրիտ զգացողությամբ, մեղեդիական նկարագրի վավերականությամբ³⁶:

Շնորհալու հոգևոր երգերի գրառումներում ակնառու են Կոմիտաս Վարդապետի ոչ միայն հոգևորական-տեսաբանի գիտելիքները, այլև տաղանդավոր կոմպոզիտորի ստեղծագործական անհատականությունն ու պոլիֆոնիկ վար-

³⁶ Շնորհալու տաղաչափական արվեստի բազմազանությանն ու ներփն երաժշտականությանն է անդրադարձել նաև Կոմիտասի մտերիմ բարեկամ Մանուկ Աբեղյանը՝ Մ. Աբեղյան, *Երկեր*, Կ. Գ, էջ 106:

պետությունը: Շնորհալիական հոգևոր երգաստեղծության շարահյուսական, ձևակազմական, ելևէջային և մետրա-ռիթմիկ առանձնահատկությունները, մեղեդու կառուցման սկզբունքները Կոմիտաս Վարդապետի ձայնագրություններում և բազմաձայն մշակումներում դրսևորված են ոճի գերազանց զգացողությունամբ, ինչն ապահովում է այդ ստեղծագործությունների գեղարվեստական անշափելի արժեքը:

Շնորհալու շարականները բանաստեղծական արվեստի բարձունք են և աչքի են ընկնում տաղաչափական հարստությամբ: Շնորհալու շարականի և տաղի յուրաքանչյուր բառն արտասանվում ու հնչում է հայոց տաղաչափության բոլոր երանգներով: Այս հատկանիշները հնարավորինս պահպանված են Կոմիտասյան գրառումներում, միևնույն ժամանակ, Կոմիտասի ներդաշնակումներում բավականաչափ ընդգծված է կոմպոզիտորի անհատական ձեռագիրը, որն ասես բազմաձայնությամբ ներհյուսվում և առանձնակի արտահայտչականությամբ շնչավորում է Շնորհալու շարականների անզուգական մեղեդիները: Կոմիտասը միայն չի ձայնագրել, նա խորապես ըմբռնել է դարավոր մշակույթի յուրօրինակ նկարագիրը: Շնորհալիական շարականների ու հոգևոր երգերի Կոմիտասյան բազմաձայնության մեջ նկատում ենք հոգևոր այն ներքին երկխոսությունը, որը Վարդապետը, դարերի խորքից վարել է մեծագույն Հայրապետի հետ: Կոմիտասն իր երաժշտագիտական ուսումնասիրություններում կարևորում էր եկեղեցական երաժշտությունը, որը մշտապես զարգացել և հարստացել է եկեղեցու հովանու ներքո: Բնականաբար, խորապես ուսումնասիրելով եկեղեցական եղանակների ոճական առանձնահատկությունները, նա հնարավորինս զգուշորեն էր մոտենում դրանց ներդաշնակման հարցերին: Վարդապետի մանրազնին աշխատանքը երաժշտական նյութի հետ սկսվում էր մոնոդիայի ձայնագրման պահից: Օժտված լինելով բացառիկ երաժշտական ինտուիցիայով, Կոմիտասն ընտրում էր ամենատիպական և բնորոշ երգանմուշները (թե՛ հոգևոր, և թե՛ աշխարհիկ): Դրան, ըստ երևույթին, հաշորդում էր երգի երաժշտալեզվական բաղադրիչների տեսական վերլուծությունը, խոսք-մեղեդի ներդաշնակ կապի բացահայտումը: Երաժշտական նյութի վերջնական բյուրեղացումը բազմաձայնելու և գեղարվեստական կերպարը կերտելու ընթացքն էր, և բոլոր «միջամտությունները» միտված էին այդ կերպարի ամբողջացմանը:

Կոմիտասի առաջին հոգևոր եղանակի ձայնագրությունը, որն արել է էջմիածնում 1887 թ., եղել է Շնորհալու «Սրհնութիւն հրեշտակապետացն Միքայելի և Գաբրիելի և ամենուն երկնային զօրացն» շարականը՝ ձայնագրած վարդապետ Դամեքյան Վաղարշապատցոյց³⁷: Շնորհալու այս շարականն աչքի է

³⁷ ՁԱԳԱԹ Կոմիտասի ֆ., 333ա: Տե՛ս նաև, Մատենագիրք Հայոց, հ. ԽԱ, ԺԲ դար, Ներսես Շնորհալի, Գրք Ա, էջ 561:

ընկնում իր մետաքսահյուս, զարդուորուն եղանակավորմամբ: Ե դասարանի աշակերտ Սողոմոնը, որ օժտված էր բացառիկ լսողությամբ, ձայնագրել է հնարավորինս ճշգրիտ: Երաժշտական լեզվի մաքրությամբ են աչքի ընկել Կոմիտասի՝ շնորհալիական բոլոր հոգևոր երգերի գրառումները, որոնք Վարդապետը հնչեցնում էր ինչպես եկեղեցում, այնպես էլ համերգային կատարմամբ: Առանձնակի ուշադրության է արժանի Կոմիտասի ձայնագրած «Նորահրաշ» շարականի խմբերգային բազմաձայնության փայլուն օրինակ դարձած «Նորահրաշ պսակավոր»-ը: «Նորահրաշ պսակավոր» հայրենասիրական շարականում Շնորհալիս գովերգում է Ավարայրի հերոսներին՝ Մեծն Վարդանից մինչև նահատակված շարքային մարտիկները:

Նորահրաշ պսակաւոր և զօրագլո՛ւ փա առափնաց,
 Վառեցար զինու հոգւոյն արիաբար ընդդէմ մահու,
 Վարդա՛ն, քաջ նահատակ, որ վանեցեր ըզբըշնամին,
 Վարդագոյն արեամբըդ քով պըսակեցեր զեկեղեցի:

«Վարդանանց «Նորահրաշ»-ը ընթանում է Կոմիտաս կաթողիկոսի «Անձինք նըլիրեալք» և Հովհաննես Սարկավազ վարդապետի «Անսկիզբըն բանն Աստուած» կոթողային երկերի ձայնակարգում (բձ): Բայց «Նորահրաշ»-ը այս բոլորի մեջ մի առանձնահատուկ տեղ է գրավում ոչ միայն իր գեղարվեստական բարձր արժանիքներով (չասելու համար՝ կատարելությամբ), այլև նրանով, որ շնայած հնագույն ավանդույթների ու նորագույն ճաշակի՝ նրանում ձեռք բերված բնական համադրության, հնարավորություն է տալիս համեմատության միջոցով հստակ տարանջատելու հնուց եկող տարրը նորից», – գրում է Նիկողոս Թահմիզյանը³⁸:

Շարականը հետաքրքրել է ոչ միայն Կոմիտաս Վարդապետին, այլև Մակար Եկմալյանին, իսկ 20-րդ դարում Արմեն Տիգրանյանն այն օգտագործել է իր «Կավիթ Բեկ» օպերայի մեջ: Եկմալյանի մշակած տարբերակն իր կյանքի օրոք չի հրատարակվել³⁹: «Նորահրաշ պսակավոր» շարականին Կոմիտասն անդրադարձել է բազմիցս: Կոմիտասի գրառած միաձայն տարբերակը գտնում ենք նաև Ֆրանսիացի երաժշտագետ Պիեռ Օբրիի՝ Կոմիտասի շարականների եվրոպական ձայնանիշներով արտագրած ձեռագրում, որը գտնվում է Փարիզի Սորբոն 4 համալսարանի երաժշտագիտական գրադարանում⁴⁰:

³⁸ Ն. Թահմիզյան, *Ներսես Շնորհալի երգահան և երաժիշտ*, էջ 60:

³⁹ Ռ. Աթայան, «Ներսես Շնորհալու «Վարդանանց Նորահրաշը» Եկմալյանի և Կոմիտասի մշակմամբ», *Էջմիածին*, 1973, ժԲ, էջ 100:

⁴⁰ Մ. Մինասյան, «Պիեռ Օբրին և հայ երաժշտությունը», *ՊԲՀ*, 1968, № 4, էջ 193-204:

Վերջին՝ ամենակատարյալ եղանակավորումն ու բազմաձայնումը Կոմիտաս Վարդապետը կատարել է 1913-14 թթ. և հնչեցրել Պոլսի համերգներում: Շարականի էպիկական բնույթի զուսպ ու վեհաշուք մեղեդային գիծը ներդաշնակված է երգչախմբային բազմաձայնության նրբին անցումներով, իմիտացիոն պոլիֆոնիայի հնարներով, հայ երաժշտության ձայնակարգերից բխած բնորոշ համահնչյուններով:

ՆՈՐԱՀՐԱՇ ՊՍԱԿԱԽՈՐ

The musical score is arranged in three systems. The first system includes vocal parts T.I, T.II, B.I, and B.II. The lyrics for the first system are: "Նո - ռա - հրաշ ալ - սա - կա - տը". The second system includes vocal parts and piano accompaniment. The lyrics for the second system are: "Եւ զօ - ռա - զուկս ա - ռա - քի՛ն - եաց, վա - ռե - ցար", "նո - ռա - հրաշ, վա - ռե - ցար". The third system includes vocal parts and piano accompaniment. The lyrics for the third system are: "զի - նու հոգ - տյ՛ն ա - թի - ա - քար ընդ - դէ՛մ ճա - հու:", "զի - նու ա - թի - ա - քար ընդ - դէ՛մ ճա - հու:"

Ներսես Շնորհալուց մինչև Կոմիտաս Վարդապետ

Գուցե այս անդրադարձներն ունեն նաև ավելի ներքին հիմքեր, և Կոմիտասը Շնորհալու մեջ գտնում էր նախատիպ ու կատարելանմուշ իր իսկ համար, և Շնորհալու կերպարն իրականում խորապես ազդել է Կոմիտասի վրա: Շնորհալու քերթվածներն ունեն բարոյակրթական նպատակ, արծարծում են մարդու հոգևոր մաքրագործման խնդիրը, իր խրատներն ու խորհուրդները նա խարսխում էր քրիստոնեական պատվիրանների՝ իբրև անվիճելի ճշմարտությունների վրա: Շնորհալին գրականության, արվեստի կոչումը տեսնում էր ժողովրդի բարօրությանը ծառայելու, «նիրհած հոգիները» արթնացնելու, մարդկանց լուսավորելու մեջ: Հայ երիտասարդներին կրթելու, երաժշտանոց հիմնելու բաղձալի նպատակներով էր ապրում նաև Կոմիտաս Վարդապետը:

Շնորհալին, որպես երգիչ ինքն էր առաջինը կատարում իր ստեղծած մի շարք երգեր⁴¹: «Ուրախացի՛ր, Սրբուհի» սքանչելի շարականն, զոր եւ հրեշտակային ձայնով երգած է – կ'ըսեն մասնաւոր առթի մը մէջ», – գրում էր Վեոնդ Արիշանը⁴²: Բազմաթիվ նվագահանդեսներում իր անզուգական ձայնով կամ ավիշանական բնորոշմամբ «հրեշտակային ձայնով» փայլում էր նաև Կոմիտաս Վարդապետը:

Ներսես Շնորհալին ու Կոմիտաս Վարդապետը երաժիշտ-աստվածաբաններ էին, ինչպես համաշխարհային երաժշտական մշակույթի բարձունքներում կանգնած մեծ ստեղծագործողները (Պալեստրինա, Յո. Ս. Բախ), որոնց երաժշտությունը կոչված էր Աստծուն գովերգելուն և մարդկային հոգիները վեհացնելուն⁴³: Ներսես Շնորհալին եկեղեցու և հայոց արժեքների պաշտպանն էր: Այս առաքելությունը ժառանգել էր նաև Կոմիտաս Վարդապետը: Բայց Շնորհալին, ինչպես և Կոմիտասը, հաղորդակից էին իրենց ժամանակի համաշխարհային արվեստի առաջադեմ ուղղություններին:

Ինչպես վերը նշեցինք, Շնորհալին քահանայության գլխավոր և կարևոր հմտություններից էր համարում մանրուսման եղանակների իմացությունը, իսկ կրթության, փիլիսոփա լինելու չափանիշ համարում էր երաժշտական արվեստին տիրապետելը՝ քահանաներից ու հոգևորականներից պահանջելով երաժշտական արվեստի բացարձակ իմացություն: Մեր խորին համոզմամբ, Կոմիտաս

⁴¹ Ն. Թահմիզյան, *Ներսես Շնորհալի երգահան և երաժիշտ*, էջ 11:

⁴² Ղ. Արիշան, *Շնորհալի եւ պարագայ իւր, Վեներտիկ, 1873, էջ 85՝ «Շնորհալի Երգեցող. – Երաժշտութիւն Հայոց»:*

⁴³ Պատահական չէ, որ Բախին երաժշտության պատմության մեջ «Ավետարանիչ» էին անվանում, նրա «Մատթեոս» պասիոնը համարելով Ավետարանի լավագույն մեկնությունը՝ կանտատ-օրատորիալ ժանրի միջոցով: Ներսես Շնորհալին ևս անդրադարձել է Մատթոս Առաքյալին, «Մատթեոսի Ավետարանի մեկնութիւնը» նրա նշանակալից երկերից մեկն է, տե՛ս, *Մատենագիրք Հայոց*, հ. ԻԲ, ժԲ դար, *Ներսես Շնորհալի*, Գիրք Բ, Երևան, 2022, էջ 423-436:

Վարդապետը հենց Ներսես Շնորհալու առաքելության մեջ էր հաճախ գտնում իրեն հուզող և կարևոր հարցերի պատասխանը՝ իր գործունեության մասին շարունակելով նրա ծրագիրը:

Ամփոփելով նշենք՝ Ներսես Շնորհալին իր ժամանակին խորապես գիտակցել է, որ Հայոց ինքնության առաջին հենարանը Հայ Առաքելական եկեղեցին է և այդ եկեղեցում հնչող երաժշտությունը: Շնորհալին պայքարել է հայ ինքնության համար՝ հզոր կայսրությունների մեջ պահելով հայ եկեղեցու բացառիկությունը, նաև ինքնուրույն հայ հոգևոր երաժշտության միջոցով: Համոզված ենք, որ կաթողիկոս և դիվանագետ Ներսես Շնորհալին, քաջ իմանալով հայոց երգաստեղծության ողջ պատմությունը, իբրև հոգևոր զենք և վահան է գործածել հայ եկեղեցական պաշտոնագրության ինքնատիպ նկարագիրը: Նրա հոգևոր երգերում հատուկ ընդգծված է ներդաշնակ կապը հայ ժողովրդական, մասնավորապես վիպական երգերի հետ: Շնորհալու հանճարեղ գրիչը հոգևոր պայքար է հայ եկեղեցու ապրելու իրավունքի համար՝ ասորական, բյուզանդական և հռոմեական եկեղեցիների կողքին: Դարեր հետո Կոմիտաս Վարդապետը յուրացնելով հայոց միջնադարյան գանձերը, կհնչեցնի դրանք համերգասրահներում, կհաստատի հոգևոր մեղեդիների և գեղջուկ հնամենի երգերի հիմքերի միասնությունն ու ազգակցական կապը: 1910 թ. Կոմիտասը կհաստատվի Պոլսում, որպեսզի բարենորոգի Պոլսի հայկական եկեղեցիների երգեցողությունը:

Կոմիտաս Վարդապետն իր գործունեության մասին կրթական հանճարեղ բանաձև. «Հայն ունի ինքնուրույն երաժշտություն», դրանով իսկ շարունակելով Շնորհալի-երաժշտի կյանքի գործը: Այսօր էլ չափազանց ներդաշնակ են հնչում ինչպես «Ներսեսի երգ», այնպես էլ «Կոմիտասյան երգ» արտահայտությունները: Կոմիտաս Վարդապետն առավել քան սուր էր զգում ժամանակաշրջանի տարատեսակ ճնշումների ողջ բեռը և իսկական հոգևորականին վայել իր ազնիվ նկարագրով շարունակում Հայոց եկեղեցու հայրերի առաքելությունը՝ պահպանել հայ ինքնությունը հայոց լեզվի և նրանից բխած հայ ինքնուրույն երաժշտության միջոցով: Այս առաքելության մասին էլ Կոմիտաս Վարդապետը «20-րդ դարու Շնորհալի» կոչմանն արժանացավ:

LUSINE SAHAKYAN

NERSES SHNORHALI AND KOMITAS VARDAPET

Key words: Nerses Shnorhali (Nerses IV the Gracious), Komitas Vardapet, church music, musical and poetic art, hymn, spiritual heritage.

The article presents the relationship between Nerses Shnorhali and Komitas Vardapet, which are of import not only the study of Komitas and medieval musical

traditions, but also to the study of music and ethnomusicology writ large. Komitas Vardapet dealt with the legacy of Nerses Shnorhali both in his musical and educational pursuits.

On May 28, 1893, Komitas presented his graduate thesis entitled “Shnorhali: his Era and the Religious Problems of his Time” to the Gevorgyan Seminary Board of Education. In this study he addresses the life and activities of the Catholicos, covering a number of historical, political and religious issues. This work was the starting point of Komitas’ lifelong engagement with the work and musical legacy of Shnorhali.

From his very first article treating Armenian Church music, Komitas Vardapet emphasized the ideas and findings of Nerses Shnorhali, as well as the tonal and metrical features of Shnorhali’s musical and poetic art. Komitas highly appreciated the traditions of the Cilician school and sought to analyse and define the method of Armenian *manrusumn* (melismatic chants of the Breviary).

In Komitas’s recordings of spiritual music, the hymns and chants of Nerses Shnorhali occupy a key place. They are not abundant, but they are of exceptional artistic value. At the same time, Komitas Vardapet’s recordings are distinguished by their artistic merit, and their sensitivity to Shnorhali’s style. Komitas Vardapet sang the hymns of Nerses Shnorhali both in church and in concert performance.

ЛУСИНЕ СААКЯН

НЕРСЕС ШНОРАЛИ И КОМИТАС АРХИМАНДРИТ

Ключевые слова: Нерсес Шнорали, Комитас Вардапет, церковная музыка, музыкально-поэтическое искусство, шаракан, духовное наследие.

В статье рассматривается отношение Комитаса Вардапета к творчеству Нерсеса Шнорали. Данный вопрос имеет ключевое значение не только для комитасоведения и музыкальной медиэвистики; он представляет интерес и в общем контексте всей мировой музыкальной культуры.

Наследием Шнорали Комитас занимался на протяжении всей своей музыкально-просветительской деятельности. 28 мая 1893 года на суд учебного совета духовной семинарии Геворгян Комитас представил свою выпускную работу под названием «Шнорали. Его эпоха и волнующие его религиозные вопросы того времени», которое было удостоено премии. В исследовании Комитас осветил ряд вопросов, касающихся историко-политических и рели-

гиозных аспектов жизни и деятельности католикоса. Оно стало отправной точкой для глубокого познания творчества Шнорали, профессионального изучения его музыкального наследия.

В первой же статье, посвященной армянской церковной музыке, Комитас Вардапет подчеркнул особую роль Нерсеса Шнорали в ее развитии, высоко оценил его мысли и суждения, обратил внимание как на стиховые, так и на ладовые особенности его музыкально-поэтического искусства. Характеризуя мелодические образцы «манрусума» (мелизматических песен Часослова), Комитас очень высоко оценил заслуги Киликийской школы.

В комитасовских записях духовной музыки особо важное место занимают шараканы и священные песнопения Нерсеса Шнорали. И, хотя их количество невелико, они представляют исключительную художественную ценность. При этом записи Комитаса Вардапета отличаются совершенством поэтического и музыкального языка, тончайшим чувством стиля Шнорали. Произведения Нерсеса Шнорали в исполнении Комитаса звучали как в церкви, так и в концертном исполнении.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Գլաձորի համալսարանի ուսուցիչները և սաները..... 5

ՀՐԱՆՏ ՕՀԱՆՅԱՆ

Դավիթ-Դանիելյան պալաթարը և Լազարյանները..... 34

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ԳԱՅԱՆԵ ԹԵՐԶՅԱՆ

Գևորգ Կաղի ժամանակաշրջանի ճշգրտման փորձ..... 54

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԻՆԵ ՄՈՍԻԿՅԱՆ

«Խառնվածք» հասկացություն միջնադարյան ընկալումները..... 61

«ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ՝ ԲԱԶՄԱՇՆՈՐՀ ՀԱՅՐԱՊԵՏԸ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻՑ (2023 թ. հունիսի 21-23)

ԶԱՔԱՐԻԱ Ծ. ՎՐԴ. ԲԱՂՈՒՄՅԱՆ

Հայոց եկեղեցու անդամագրությունն ըստ
«Արևորդիների դարձի մասին» Ս. Ներսես Շնորհալու թղթի..... 83

ԷՌԵԱ ՄԱՆԵԱ ՇԻՐԻՆՅԱՆ

Ներսես Դ Կլայեցի կաթողիկոսի «Շնորհալի»
պատվանվան մասին..... 97

ՎԱՆՈ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Ներսես Շնորհալին խրատական բանաստեղծության հիմնադիր..... 116

ԼԱԼԻԿ ԽԱԶՍՏՐՅԱՆ

Պատկերավոր համեմատությունների ձևակազմական
կաղապարները Ներսես Շնորհալու «Ողբ եղեսիոյ» պոեմում..... 127

ԼՈՒՍԻՆԵ ՍԱՀԱԿՅԱՆ

Ներսես Շնորհալի և Կոմիտաս վարդապետ..... 139

ՄՀԵՐ ՆԱՎՈՅԱՆ

Հայկական վերածննդի երաժշտաբանաստեղծական արվեստի որոշ
բնութագրիչներ՝ Ս. Ներսես Շնորհալու ժառանգության մեջ..... 156

ՀԱՍՄԻԿ ԻՐԻՑՅԱՆ

Ներսես Շնորհալու նորահայտ բնագիրը ՄՄ 3839 ձեռագրում (անգլ.)..... 166

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՍԵՅԵԳԵՀՆԱՍԻՄ ՖԱԹԵՄԻ, ՀԱՅԿԱԶ ԳԵՎՈՐԳՅԱՆ

*Մատենադարանի այլալեզու ֆոնդի
չորս միավորի նկարագրություն (անգլ.)*..... 179

ՍԱԹԵՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երկու հնատիպ հմայիլների ուսումնասիրության հետքերով..... 195

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

ԷՍԹԵՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

*Գրիգոր Լուսավորչին վերագրվող տեսիլ-հարցումը
(համեմատական բնագիր)*..... 212

ԱՐԵՎԻԿ ԱՐԱԲՅԱՆ

*Առաքել Սյունեցու «Ղազարու յարութեան» և
«Մեծատան եւ Ղազարու» անտիպ տաղերը*..... 251

ԳՐԱԵՈՍՈՒԹՅՈՒՆ

ԱՐՈՒՍՅԱԿ ԹԱՄՐԱԶՅԱՆ

*Զաֆարիա Ծայրագոյն վարդապետ Բաղումեան,
Կիրակոս Երզնկացու՝ Սուրբ Եւագր Պոնտացու երկերի լուծմունքները,
խմբագիր՝ Գ. Տէր-Վարդանեան, Երևան, Մատենադարան, 2022*..... 260

ԱՐՄԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ

*Les Arts Libéraux et les Sciences dans l' Arménie
Ancienne et Médiévale («Ազատ արվեստները և գիտությունները
հին և միջնադարյան Հայաստանում»), sous la direction
de Valentina Calzolari, Paris: Vrin 2022*..... 270

ԲԱՆԱՎԵՃ

ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Դարձյալ հին Երևանի աշտարակի և
Երկուերեսնի եկեղեցու պարզաբանման շուրջ*..... 280

*Բանբեր Մատենադարանի հանդեսի հոդվածների ձևավորմանը
վերաբերող պահանջներ*..... 296

CONTENTS

HISTORY

KAREN MATEVOSIAN

The Teachers and Students of Gladzor University.....5

HRANT OHANYAN

The Role of the Lazaryans in the Davit-Daniel Conflict.....34

PHILOLOGY

GAYANE TERZYAN

An Attempt at Dating the Life of Gevorg Kagh.....54

NATURAL SCIENCES

KARINE MOSIKYAN

Medieval Conceptions of Temperament.....61

PROCEEDINGS OF THE 6TH INTERNATIONAL CONFERENCE “NERSĒS SHNORHALI THE GRACIOUS PATRIARCH” (June 21-23, 2023)

PROTO-ARCHIMANDRITE ZACHARIA BAGHUMYAN

Membership in the Armenian Church According to St. Nersēs
Gracious' Letter “On The Conversion of the Sons of the Sun”.....83

ERNA MANEA SHIRINIAN

About the Title “Graceful” of Catholicos
Nersēs IV Klayets'i.....97

VANO EGHIAZARYAN

Nersēs Shnorhali as the Founder of the Genre
of Didactic Poetry.....116

LALIK KHACHATRYAN

Formal Models of Figurative Comparisons
in the Poem “Elegy on the Capture of Edessa”
by Nersēs Shnorhali.....127

LUSINE SAHAKYAN

Nersēs Shnorhali And Komitas Vardapet.....139

MHER NAVOYAN

Some Characteristics of the Musical and Poetic Art
of the Armenian Renaissance in the Heritage
of St. Nerses Shnorhali 156

HASMIK IRITSYAN

A Newly Discovered Work of Nersēs Shnorhali
in Ms M3839 166

BIBLIOGRAPHY**SAYEDEHNASIM FATEMI, HAYKAZ GEVORGYAN**

Description of Four Units of Matenadaran's Foreign Language Fund 179

SATENIK GRIGORYAN

On Two 18th C. Scroll Amulets 195

PUBLICATIONS**ESTER PETROSYAN**

The Revelation Attributed to Gregory the Illuminator 212

AREVIK ARABYAN

Arak‘el Siwnets‘i and his Unpublished Verses
“The Resurrection of Lazarus” and “The Rich Man and Lazarus” 251

BOOK REVIEWS**ARUSYAK TAMRAZYAN**

Proto-Archimandrite Zacharia Baghumyan, *Kirakos Erznkais‘i’s
Commentaries on Saint Evagrius Ponticus’ Works*, Yerevan, 2022 260

ARMINE MELKONYAN

Les Arts Libéraux et les Sciences dans l’Arménie Ancienne et Médiévale,
Sous la direction de Valentina Calzolari, Paris: Vrin 2022 270

DISCUSSION**ARSEN HARUTYUNYAN**

Once More on the Interpretation of Old Yerevan’s Tower
and Church Yerkueresni (St. Paul and Peter) 280

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ

КАРЕН МАТЕВОСЯН

Преподаватели и учащиеся Гладзорского университета 5

ГРАНТ ОГАНЯН

Противостояние Давид-Даниэл и Лазаревы 34

ФИЛОЛОГИЯ

ГАЯНЕ ТЕРЗЯН

Опыт уточнения времени жизни Геворга Кага 54

ЕСТЕСТВЕННЫЕ НАУКИ

КАРИНЕ МОСИКЯН

Средневековые представления о темпераменте 61

ИЗ МАТЕРИАЛОВ 6-ОЙ МЕЖДУНАРОДНОЙ КОНФЕРЕНЦИИ**“БЛАГОДАТНЫЙ ПАТРИАРХ НЕРСЕС ШНОРАЛИ”****(21-23 июня, 2023 г.)****ПРОТОАРХИМАНДРИТ, ЗАХАРИЯ БАГУМЯН**

Принятие в лоно армянской церкви согласно посланию Св. Нерсеса Благодатного «Об обращении Сынов Солнца» 83

ЭРНА МАНЕА ШИРИНЯН

О титуле «Шнорали» католикоса Нерсеса IV Клаеци 97

ВАНО ЕГИАЗАРЯН

Нерсес Благодатный – основоположник жанра поучительных стихотворений 116

ЛАЛИК ХАЧАТРЯН

Формальные модели образных сравнений в поэме «Элегия на взятие Эдессы» Нерсеса Шнорали 127

ЛУСИНЕ СААКЯН

Нерсес Шнорали и Комитас Архимандрит 139

МГЕР НАВОЯН

Некоторые характеристики музыкально-поэтического искусства армянского Возрождения в наследии Св. Нерсеса Шнорали.....156

АСМИК ИРИЦЯН

Новонайденный текст Нерсеса Шнорали в рукописи № 3839 из собрания Матенадарана.....166

БИБЛИОГРАФИЯ**ФАТЕМИ СЕЙЕДЕХНАСИМ, АЙКАЗ ГЕВОРГЯН**

Описание четырех единиц иноязычного фонда Матенадарана.....179

САТЕНИК ГРИГОРЯН

О двух старопечатных свитках-оберегах XVIII в.....195

ПУБЛИКАЦИИ**ЭСТЕР ПЕТРОСЯН**

Откровение, приписываемое Григорию Просветителю.....212

АРЕВИК АРАБЯН

Неизданные стихи “О воскрешении Лазаря” и “О богаче и Лазаре” Аракела Сюнеци.....251

РЕЦЕНЗИИ**АРУСЯК ТАМРАЗЯН**

Протоархимандрит Захария Багумян, *Толкование Киракоса Ерзнкаци на сочинения Евагрия Понтийского*, Ереван, 2022.....260

АРМИНЕ МЕЛКОНЯН

Les Arts Libéraux et les Sciences dans l'Arménie Ancienne et Médiévale, Sous la direction de Valentina Calzolari, Paris: Vrin 2022.....270

ДИСКУССИЯ**АРСЕН АРУТЮНЯН**

Вновь об интерпретации башни и церкви Еркуересни (Св. Павла и Петра) старого Еревана.....280

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

Հատոր 36

BULLETIN OF MATENADARAN

Volume 36

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА

Том 36

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ Անահիտ Խանգադյանի
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տոլմանեանի
Շապիկին՝ *Ձեռ. եղմ. 365՝ Եսայի Նչեցին Գլաձորի համալսարանի
ուսուցիչների և սաների հետ*

Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ տպարանում

Ք. Երևան, Ներսիսյան 1

Չափսը՝ 70×100 1/16, տպագրական մամուլ՝ 19

տպամանակ՝ 150

Մատենադարան

Մետրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի
հրատարակչական բաժին, ֆ. Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (010) 513033
publishing.matenadaran@gmail.com

Ամսագրի թվային տարբերակը՝

banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/